Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Հովհաննես Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2019 թվականի հունիսի 5-7-ը, Ղրղզական Հանրապետություն, Բիշքեկ

4. Հրավիրող կողմը.

Ղրղզական Հանրապետության խորհրդարան

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Համաժողովի նպատակն էր մոնիտորինգի և գնահատման օգնությամբ ծանոթացնել Խորհրդարանի գործունեության արդյունավետության բարձրացման պրակտիկային, հաշվի առնելով նաև Կառավարության հետ օրենսդիր մարմնի աշխատանքային գործընթացները: Քննարկվել են նաև խորհրդարանականների համաշխարհային համաժողովի աշխատանքի փորձառությունը, եվրասիական տարածաշրջանի երկրների ազգային խորհրդարանների գործունեության մեջ մոնիտորինգի և գնահատման համակարգի ներառման և ազգային քաղաքականության գնահատման մեխանիզմի ձևավորման հնարավորությունը,

առաջարկներ ներկայացվել խորհրդարանականների տարածաշրջանային համաժողովի ձևավորումը խթանելու նպատակով:

6. Քննարկված թեմաները.

Համաժողովի ընթացքում քննարկվել են մոնիտորինգի և գնահատման ազգային համակարգերի ներմուծման արդյունավետ մոտեցումներին վերաբերող հարցերը, ինչպես նաև ուսումնասիրվել է գնահատման համակարգերի ձևավորման մեջ խորհրդարանի, կառավարության և քաղաքացիական հասարակության փոխգործակցության միջազգային փորձը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի ընթացքում երկկողմ հանդիպում է տեղի ունեցել Ղրղզական Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալի հետ: Քննարկվել են հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները, ձեռք բերվել կոնկրետ պայմանավորվածություններ համագործակցություն սկսելու շուրջ: Հայկական կողմը նշել է, որ 2018թ. վերջին դիվանագիտական խողովակով առաջարկ էր ներկայացրել առողջապահության բնագավառում երկկողմ համագործակցության համաձայնագիր ստորագրելու վերաբերյալ: Ղրղզական կողմը խոստացել է կրկին ուսումնասիրել առաջարկը և արագ արձագանքել:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ղրղզստանի առողջապահության նախարարության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել դիվանագիտական խողովակով աշխատանք տանել առողջապահության բնագավառում համագործակցության վերաբերյալ երկկողմ միջգերատեսչական համաձայնագիր ստորագրելու ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Պայմանավորվող կողմերը ջանքեր են ներդնելու ստանձնած բանավոր պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ: Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցող կողմերի միջև ամրապնդել փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

X _____

2019թ. հունիսի 11